

6085



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմոնյան  
«30» 05 2024թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 06 4 - 2 4

Նախաձեռնող՝

«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ  
Երևան, Կոմիտասի պող.38, բն.39

Գործունեությունը՝

Էջմիածին բնակավայրի Սուրբ Մ. Մաշտոց փողոց 1/2  
հասցեում բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան  
բնակելի համալիրի կառուցում  
Արմավիրի մարզ, ք. Էջմիածին

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 064 - 24

«30» *Տեպտեմբեր* 2024 թ.

Էջմիածին բնակավայրի Սուրբ Մ. Մաշտոց փողոց 1/2 հասցեում  
բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի  
կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման  
հաշվետվության

Ձեռնարկող՝	«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզ, ք. Էջմիածին

**Ներածական մաս.** «Ավա գրանիտ» ՓԲԸ-ի կողմից Էջմիածին բնակավայրի Սուրբ Մ. Մաշտոց փողոց 1/2 հասցեում նախատեսվում է իրականացնել բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի (այսուհետ՝ Համալիր) կառուցում: Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է: Համալիրի կառուցապատման համար նախատեսված հողամասը զբաղեցնում է 0,266 հա տարածք: Տարածքն ունի հարթ ռելիեֆ: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Համալիրի նախագիծը մշակվել է 2023 թվականի սեպտեմբերի 25-ին Վաղարշապատի համայնքապետարանի կողմից տրված СРРО-0000-8722 նախագծման թույլտվության պահանջներին համապատասխան:

**Նկարագրական մաս.** Համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Էջմիածին բնակավայրի Սուրբ Մ. Մաշտոց փողոց 1/2 հասցեում՝ նախկին կինոյի տան շենքի տեղում, որի մի կողմում գտնվում են բնակելի տներ ու շենքեր, մյուս կողմում՝ քաղաքապետարանի շենքը: Համաձայն հինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվության՝ հինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Նախատեսվում է քանդել կինոթատրոնի շենքը: Հաշվի առնելով այն փաստը, որ կինոթատրոնի ճակատային մասի կամարածև հատվածն իրենից ներկայացնում է ճարտարապետական արժեք, նախատեսվել է այն պահպանել՝ դրան տալով ժամանակակից լուծումներով տեսք: Նոր կառուցվող Համալիրն իրենից ներկայացնում է ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով, ինչպես նաև ավանդական ճարտարապետական տարրերով հագեցած հարմարավետ կառույց: Համալիրում նախատեսվում է տեղակայել 2 կինոդահլիճ, 2-րդ հարկում և շենքի կամարների տակ



նախատեսվում է կառուցել պատկերասրահներ, սրճարաններ և ժամանցի վայրեր: Կինոթատրոնը և բնակելի հատվածն ունենալու են առանձին մուտքեր և ավտոկայանատեղիներ:

Համալիրը բաղկացած է լինելու 2 ստորգետնյա և 10 վերգետնյա հարկերից: Ստորգետնյա հարկերը նախատեսված են որպես ավտոկայանատեղի: Ավտոկայանատեղին նախատեսված է 64 մեքենայի համար, որն ապահովված է լինելու հակահրդեհային ավտոմատ հրշեջ ազդանշանային համակարգով: Համալիրում նախատեսվում է 100 բնակարան՝ 52-97 մ<sup>2</sup> մակերեսներով: Համալիրն ապահովված է լինելու մարդատար և բեռնատար վերելակներով, դռները հակահրդեհային են լինելու, աստիճանավանդակներն ունենալու են բնական լուսավորություն: Համալիրի շենքերի տանիքները հարթ են լինելու և ունենալու են կազմակերպված ջրահեռացում: Ճակատային մասն իրականացվելու է տրավերտինով, տեղ-տեղ՝ ապակիներով: Համալիրն ունենալու է թեքահարթակներ, հրդեհային ազդարարման համակարգ և փողոցային լուսավորություն: Համալիրում նախատեսվում է հակահրդեհային համակարգ, ջրամատակարարում, ծխահեռացում, էլեկտրամատակարարում, հեռահաղորդակցության կապուղիներ:

Հաշվետվության համաձայն՝ կառուցապատվող տարածքում բացակայում են ծառաթփատեսակները: Կառուցապատման մակերեսը կազմում է 1596 մ<sup>2</sup> (նոր կառուցվող շենք՝ 1172 մ<sup>2</sup>, պահպանվող ճակատային մաս՝ 424 մ<sup>2</sup>), կանաչապատման մակերեսը՝ 630 մ<sup>2</sup>, անջրանցիկ տարածքները՝ 434 մ<sup>2</sup>: Նախատեսվում է տարածքը բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատումն իրականացվելու է տվյալ տարածքին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ: Բակային հատվածում տնկվելու են դեկորատիվ և մշտադալար ծառեր՝ ապահովելով կանաչապատ միջավայր:

Համալիրում նախատեսված են էներգախնայողության մի շարք միջոցառումներ՝ այդ թվում՝ ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար բարձր արդյունավետությամբ ջերմամեկուսիչների կիրառում, արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում, օդատարների ջերմամեկուսացում բարձր արդյունավետության ջերմամեկուսիչ նյութերով, օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

Ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվելու են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմաններին համապատասխան:

Գազամատակարարումն իրականացվելու է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմաններին համապատասխան:

Էլեկտրամատակարարումն իրականացվելու է «ՀԷՏ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմաններին համապատասխան:

Շինարարական հրապարակը կազմակերպվելու է բացառապես Համալիրի սահմաններում և բացառվելու է կառուցապատման տարածքից դուրս շինանյութերի պահեստավորումը, թափոնների կուտակումը, ավտոմեքենաների անիվների լվացումը: Շինարարության տևողությունը կազմելու է 28 ամիս:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, կանաչապատման հատակագիծը և սխեման համաձայնեցվելու են Վաղարշապատի համայնքապետարանի հետ: Բուսականության տեսակային և քանակական կազմը համապատասխանելու է կանաչապատման սխեմային:



Կանաչապատման համար ընտրվել են հետևյալ բուսատեսակները՝ թխկի սրտատերև - 5 հատ, թխկի կարմիր - 2 հատ, ձիակասկ սովորական - 3 հատ, հուդայածառ կանադական - 3 հատ, թույա լեյլանդի - 4 հատ, գիհի հորիզոնական «Օլդ գուլդ» - 8 հատ, գիհի հորիզոնական - 15 հատ, գիհի կազակական - 10 հատ, նարդոս - 198 հատ, մագնոլիա սուլանժի - 2 հատ, եղևնի կապույտ - 1 հատ, սոճի բոնսայ - 1 հատ, սոճի մուգո - 6 հատ, սոճի մուգո «մուգուս» - 8 հատ:

Ոռոգումն իրականացվելու է կազմակերպված ոռոգման ցանցի միջոցով՝ ցնցուղային և կաթիլային եղանակով: Կանաչապատ տարածքների ոռոգման ջրաղբյուր է հանդիսանալու Էջմիածնի քաղաքապետարանի իրավասության տակ գտնվող տարածքի ոռոգման ցանցը, որին միանալու վերաբերյալ առկա է համաձայնություն: Կանաչապատ տարածքի հետագա խնամքն իրականացվելու է «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ի կողմից:

Շինարարության ընթացքում իրականացվելու են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ: Տարածքն ապահովվելու է տեխնիկական ջրամատակարարմամբ և փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու համար մշտապես խոնավացվելու է: Փոշու արտանետումները կանխելու նպատակով բնահողով բարձրված մեքենաների թափքը խոնավացվելու և ծածկվելու է անթափանց թաղանթներով: Աշխատանքները կատարվելու են՝ բացառելով երեկոյան ժամերին աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացումը: Առաջացած շինարարական աղբը պարբերաբար տեղափոխվելու է համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր:

Շինարարական տեխնիկայի վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում: Շինհրապարակում քսայուղերի և նավթամթերքի պահեստավորում չի նախատեսվում: Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնը և շաղախը մատակարարվելու է Էջմիածին քաղաքում գտնվող բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված բետոնատար ավտոմեքենաներով: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումն իրականացվելու է լիցենզավորված շինարարական կազմակերպությունների կողմից:

Շինարարության ընթացքում նախատեսվող հողային աշխատանքներից առաջացող հողային հանույթը կազմելու է 9900 մ<sup>3</sup>, որից հետլիցք է կատարվելու 1100 մ<sup>3</sup>, իսկ մնացած հողային զանգվածը տեղափոխվելու է համայնքի հետ համաձայնեցված վայր:

Ուսումնասիրությունների համաձայն՝ տարածքի հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են: Հետազոտությունների արդյունքում 6,2 մ խորության վրա հայտնաբերվել են գրունտային ջրեր, հետևաբար, աշխատանքներն իրականացնելիս նախատեսվում է կառուցել գրունտային ջրերի հեռացման դրենաժային համակարգ:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավեցման և շինանձնակազմի խմելու-կենցաղային նպատակների համար: Անհրաժեշտ ջրաքանակը շինարարական հրապարակ է բերվելու տարածքում գոյություն ունեցող քաղաքային ջրագծից: Զրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա ջուր» ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն:

Համաձայն Հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են պատմամշակութային հուշարձաններ:

Շինարարության ընթացքում իրականացվող աշխատանքների արդյունքում օդային ավազանի և ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ



նախատեսվել են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար: Այդ նպատակով կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատվելու է, շինությունները ծածկվելու են անթափանց թաղանթով, շինաշխատանքների ժամանակ իրականացվելու է ջրցան, շինարարական տեխնիկան և փոխադրամիջոցները պահվելու են սարքին վիճակում, սորուն նյութերի տեղափոխումն իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով, բեռնատարների անվադողերը լվացվելու են շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստները ծածկվելու են համապատասխան բարձրությամբ թաղանթով:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով բացառվելու է շինանյութերի տեղադրումը հողային ծածկույթի վրա, ապահովվելու է շինտեխնիկայի և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ: Աշխատանքների ավարտին տարածքը մաքրվելու է շինարարական աղբից և իրականացվելու են բարեկարգման աշխատանքներ:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնները (շինարարական աղբ, տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ և գրունտի մնացորդ) տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված համապատասխան վայրեր:

Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները նախապես որոշված կլինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու նպատակով նախատեսված են կանխարգելիչ, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումներ:

Համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

1. մթնոլորտային արտանետումների (փոշի, CO, NOx և այլն) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ,
2. փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2 անգամ,
3. շահագործվող տեխնիկայի և տրանսպորտային միջոցների պարբերական ստուգումներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,
4. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ:

Մշտադիտարկումների համար շինարարության ընթացքում նախատեսվում է հատկացնել 1 760 000 ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Փորձաքննության ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ազդակիր համայնքում (էջմիածին բնակավայր) անցկացվել են հանրային քննարկումներ: Համայնքը տվել է նախնական համաձայնություն նախատեսվող գործունեության վերաբերյալ: Նախատեսվող գործունեության արդյունքում ստեղծվելու են բարենպաստ պայմաններ համայնքի բնակիչների համար, իրականացվելու է կինոթատրոնի շենքի արտաքին տեսքի վերականգնում և արդիականացում, տարածքի բարեկարգում և կանաչապատում: Շինարարության փուլում բացվելու են աշխատատեղեր:

Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված



կարգով պետական մարմիններից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել հաշվետվությունը լրամշակելիս:

Նախաձեռնողը պարտավորվել է շինարարության ընթացքում իրականացնել շրջակա միջավայրի վրա առաջացող ազդեցությունները բացառող կամ նվազագույնի հասցնող միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության ընթացքում մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումներն իրականացվելու են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջների պարտադիր կատարմամբ:

Ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ ջրօգտագործումն իրականացվելու է պայմանագրային հիմունքներով՝ տեխնիկական պայմաններին համապատասխան, իսկ ջրահեռացումը՝ հաշվետվությամբ ներկայացված լուծումներին համապատասխան:

Հողային ծածկույթի վրա ևս ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ համաձայն հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության՝ տարածքը նախկինում կառուցապատված է եղել, և հողաբուսաշերտը բացակայում է:

Թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացվելու է «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Բնապահպանական ազդեցությունները հիմնականում կանխատեսվում են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

### **Փորձաքննական պահանջներ**

Կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը՝

1. Շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով:

2. Օդերևութաբանական անբարենպաստ պայմանների առաջացման դեպքում ապահովել հաշվետվությամբ ամրագրված միջոցառումների իրականացումը:

3. Շինարարության փուլում ջրային ռեսուրսների պահպանության նպատակով առաջնորդվել Ջրային օրենսգրքի և իրավական այլ ակտերի պահանջներով, բացառել կեղտաջրերի արտահոսքը դեպի հեղեղատար համակարգ:

4. Շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի կանաչապատում և բարեկարգում՝ Վաղարշապատի համայնքապետարանի կողմից հաստատված բարեկարգման, կանաչապատման նախագծի համաձայն՝ տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ դրանց հետագա պարտադիր ոռոգմամբ: Կանաչապատումն իրականացնելիս առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջներով և ապահովել նախագծման թույլտվությունում ամրագրված կանաչապատման մակերեսը:



5. Շինարարության ընթացքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Ապահովել հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում ամրագրված բոլոր միջոցառումների իրականացումը:

7. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջներով:

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ


«Ավա գրանիտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված էջմիածին բնակավայրի Սուրբ Մ. Մաշտոց փողոց 1/2 հասցեում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Քրիստինե Հարությունյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Էսաշիկ Մարտիրոսյան